

Կրթություն

- ՀՀ Շիրակի մարզում գործում են 162 հանրակրթական դպրոցներ, որոնցից 146-ը մարզային ենթակայության, այդ թվում 3-տարրական, 41-ը՝ հիմնական, 101-ը միջնակարգ, 1-ը՝ երեկոյան, 12-ը՝ ՀՀ կրթության և գիտության նախարարության ենթակայության, որից 2-ը՝ վարժարան, 1-ը՝ միջնակարգ, 7-ավագ, 2 ավագ դպրոց ձևավորվել և գործում են որպես Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարանի Գյումրու մասնաճյուղի և Գյումրու պետական մանկավարժական ինստիտուտի հենակետային ավագ դպրոցներ:

ՀՀ կառավարության 2019 թվականի օգոստոսի 29-ի N 1098 - Ա և N 1116 – Ա որոշումներով ՀՀ Շիրակի մարզի «Գյումրու թիվ 3 հատուկ (օժանդակ) դպրոց» և «Արթիկի թիվ 1 հատուկ դպրոց» ՊՈԱԿ-ները վերակազմավորվեցին և ձևավորվեցին տարածքային մակարդակում երեխայի կրթության կազմակերպման մանկավարժահոգեբանական աջակցության ծառայություններ մատուցող կազմակերպություն:

- 2019 թվականի խոշորագույն քայլը, որն իրականացվել է ՀՀ Շիրակի մարզի կրթության ոլորտում, դա Համընդհանուր ներառական կրթություն ծրագրի մեկնարկն է, որի համար իրականացվել են բազում միջոցառումներ.

2019 թվականի սեպտեմբեր ամսից ՀՀ Շիրակի մարզում մեկնարկվել է Համընդհանուր ներառական կրթություն ծրագիրը: 2019 թվականի օգոստոսից սեպտեմբեր ամսներին՝ «Հուլիսի կամուրջ» ՀԿ-ի կողմից՝ ՀՀ Շիրակի մարզպետարանի աջակցությամբ, ՀՀ Շիրակի մարզի դպրոցներում անցկացվել է համընդհանուր ներառական կրթության ծրագրի իրականացման վերապատրաստումներ: Վերապատրաստումներին մասնակցել են 150 տնօրեններ և շուրջ 600 ուսուցիչներ:

- Արթիկի մանկավարժահոգեբանական աջակցման կենտրոնի կողմից գնահատվել են 282 աշակերտ՝ 66 դպրոցից, աշակերտներից 100-ը արդեն իսկ ունեն վկայագրեր, գործընթացը ընթացքի մեջ է: Գյումրու կենտրոնում գնահատվել են 510 աշակերտ՝ 27 դպրոց:

- ՀՀ Կենտրոնական բանկը ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության հետ համատեղ 2019 թվականի սեպտեմբեր և հոկտեմբեր ամիսներին անցկացրել է «Ֆինանսական կրթությունը դպրոցում» ծրագիրը, որի շրջանակում կազմակերպվել են «Մաթեմատիկա», «Հանրահաշիվ», «Հասարակագիտություն» և «Ես և

շրջակա աշխարհը» առարկաները դասավանդող 124 ուսուցիչների վերապատրաստումներ: Վերապատրաստումները կրելու են շարունակական բնույթ:

- Կրթական որակի բարելավման գործում առանձնահատուկ դեր ունեն նախակրթարանները: Մարզում գործում են համայնքային 54 մանկապարտեզներ և 64 դպրոցահեն նախակրթարաններ:

- 2019 թվականին ՀՀ Շիրակի մարզի 118 դպրոցներում սկսել են գործել Արմաթ ինժեներական լաբորատորիաները՝ որոնք կընդգրկեն 33 աշակերտից ավել բոլոր դպրոցներում: Վերանորոգվել են համակարգչային դասարաններ, որոշ դպրոցներ համալրվել են նաև տեխնոլոգիական այլ գույքով:

- ԲՈՒՀ – երի ընդունելություն՝ 82.4%, հայտագրվել է՝ 884 դիմորդ, ընդունվել՝ 728: 9-րդ դասարանի հայոց լեզու առարկայի քննությանը մասնակցել են 2493 աշակերտ՝ միջին միավորը 12,21:

- Կադրային ապահովվածության խնդիրը գյուղական համայնքներում լուծվում է «Դասավանդի՛ր, Հայաստան» կրթական ծրագրի և Շիրակի մարզի զբաղվածության կենտրոնի կողմից իրականացվող ծրագրերի միջոցով: 2019 թվականի ընթացքում կայացել է 25 ուսումնական հաստատության ղեկավարի թափուր տեղի համար հայտարարված մրցույթ, դեռ 8 տեղ թափուր են:

- Յուրաքանչյուր տարի 7-13 տարեկան շուրջ 585 աշակերտ՝ Զոհված, հաշմանդամ դարձած զինծառայողների և բազմազավակ ընտանիքների, մեկնում են Հանքավանի ճամբարներ ամառային հանգստի, այս տարին էլ բացառություն չէ:

- Սնունդ ծրագիր՝ մարզի թվով **138** դպրոց իրականացնում է «Կայուն դպրոցական սնունդ» ազգային ծրագիրը, այս տարում ևս **4** դպրոցներում՝ «Արդենիսի հիմնական դպրոց», «Աղվորիկի հիմնական դպրոց», «Բերդաշենի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպություններում, որտեղ «Կայուն դպրոցական սնունդ» ծրագրի շրջանակներում անհնար է տրամադրել տաք սնունդ, տրամադրվելու է չոր սնունդ, ՀՀ կառավարության 2013 թ.-ի օգոստոսի 22-ի նիստի N 33 արձանագրային որոշման Հավելված N 1-ի Աղյուսակ 1-ում ներկայացված նախաճաշի տարբերակներից որևէ մեկը կիրառելու պայմանով:

- *Ջեռուցում*. Վերջին երեք տարիների ընթացքում մարզային ենթակայության որոշ հանրակրթական դպրոցների շենքային պայմանները և ջեռուցման համակարգերը ենթարկվել են անհրաժեշտ վերանորոգումների՝ 2019 թվականի տվյալներով փաստացի

գազիֆիկացվում են՝ **78** դպրոց: Էլեկտրաէներգիայով ջեռուցվող դպրոցներ՝ **30**, հեղուկ վառարանով ջեռուցվող դպրոցներ՝ **7**, հեղուկ վառարան + էլեկտրաէներգիա՝ **15** դպրոց, դիզ. Վառելիքով կենտրոնացված՝ **16** դպրոց:

Տնակային պայմաններում՝ դասընթաց է կազմակերպվում մարզի ընդամենը 1 դպրոցում՝ Զաջուռ կայարանի տարրական դպրոց:

- *Հորային զուգարան:* Մարզի թվով 16 դպրոցներ դեռ չունեն կոյուղագծեր և օգտվում են հորային զուգարաններից:

- Հանրակրթական ուսումնական հաստատությունների շենքերի հիմնանորոգման, վերանորոգման, մարզադահլիճների (61 դպրոցում ընդհանրապես չկա մարզադահլիճներ, իսկ 58-ը՝ անհրաժեշտություն ունեն առաջնային վերանորոգման), և մարզահրապարակների կառուցման, վերականգնման և նորոգման աշխատանքների կազմակերպում: